

հեղձուկ, մելամաղձիկ. այնպէս որ տեղ տեղ աւելի լալիւնի է նմանութան երգի. իրաւ որ դրանք երգեր չեն, այլ ահա ու հառաջանքների մի մեծ շարք, որը ու կականի միմեանց յետեից կրկնուող արձագանքներ: Այդ է պատճառը, որ երբ օտարները լսում են, կամ գաշնամուրի վրայ ածում՝ նախ ոչինչ չեն հասկանում, երկրորդ այն չի դուրս գալիս, ինչ որ պէտքն է, ինչ որ մենք, արեւելցիներս ենք հասկանում:

Ինչպէս յայտնի է, հայերի մէջ քան ձայն ունեցող բաւականին հազուադէպ է. մեծագոյն մասը բարի տալիս և աւելի անօր են զանազան տեսակի, հետեւապէս և մեր աշուղներն էլ եղել են այդ ձայների տէր: Եղել են երբեմն այնպիսի դարմանալի բարձր և զիլ ձայն ունեցողներ, որ յետ չեն մնացել հուշակաւոր թուրք Հիւսէյնից: Օրինակ աչըղ Խրթըզի ձայնին կարող էր նախանձիլ մայրաքաղաքների ամեն մի դերասան-երգիչ:

Երբ երաժշտական դպրոցում և կոնսերվատօրիաներում երգեցողութիւն են աւանդում, պրոֆեսորը, ինչպէս յայտնի է, հետեւում է իւր աշակերտի և կանդնուածքին, կուրծքը և գլուխը բռնելու ձևին, բերանը բանալու չափին և այլն: Ո՛վ պիտի հետեւէր աշուղին, որի դպրոցն ու քօնսեռվատուարը եղել է սրճարանն ու հրապարակը, տեսնողն ու լսողն եղել է ամբոխն: Դրա համար և աշուղներ կան, (որոնց մենք ճանաչում ենք) որ երգելիս այնպէս են խրպոտ ու անախորժ ձայներ հանում, այնպէս են ծամածռում քիթ ու բերանը և դէմքին տալիս կարրեկատուրային կերպարանք, որ փոքրի շատէ գեղեցկի ճաշակ ունեցող մարդը գծուարութեամբ կը կարողանայ համբերել: Ոմանք դիտմամբ են անում այդ, կարծելով իբր թէ լաւ բան են անում:

Ձենք մեղադրում այդ մարդկանց. քանի երիտասարդ են եղել, ուղղող, խրատող չեն ունեցել, այժմ էլ ուշ է այդ մասին մասձելը, թող այդպէս անցնեն, գնան, դրանք էլ ունեն իրենց առատութիւն, իրենց մշտական լսողները, ուկնդիրները:

§ 17. Որպէս դերասան. Աշուղի՝ բանաստեղծ, երաժիշտ, երգիչ լինելը ամենքս գիտենք. բայց դիտենք և ճիշդ որ աշուղը և գերաստն է, գէլլամատէօն է: Նա մի ժամանակ երգելու կամ պատմելու միջոցին և խաղացել է, այսպէս ասած ներկայացրել է, որ յիշեցնում է մեզ թաւրոնի սկզբնական փորձերը: Հնագոյն ժամանակներում Դողթան երգիչների մէջ արդէն, ինչպէս պատմիչների խօսքերից կարելի է հասկանալ, եղել է այդ բանը: Ահա բացատրութեան նեղութիւնը թող յանձն առնի Էմին: «Ըստ մեզ—ասում է հոգեւոյս գիտնականը—գուսանական նշանակէ ոչ ծրգ արժանագրեալ (զոր նոր բառարանն չը գիտեմ էր ժամն մեկնա-

բանէ) այլ որովհետեւ գուսանական է յոգնակի գուսան բառի (որպէս զօրական, բազմական) և գուսուն առ մեզ զիստացողն ի թատրոնի կամ զլիստակներգուն յայտ առնէ, յոյր սակա առաւել յարմար թուի մեզ ընդ անուամբդ զՅրգիշս խաղացողս իմանալ, որք առաջի ժողովրդեան ի հրապարակա մնացուցանէին զպարունակեալս յերգս վիպասանաց... Այս հնադարեան սովորութիւնը միջին դարերի ամբողջ հազարամեայ շրջանն անցնելով եկել հասել է մինչև մեր ժամանակը: Այժմ էլ գաւառներում ու գիւղերում մենք պատահում ենք հայ աշուղին հրապարակական պատմութիւններ ու հեքիաթներ ասելիս: Մեզ պատահել է մի քանի անգամ ավանատես լինել այդ բանին՝ զրա համար մեր տեսած ու լսածից մասն ենք հանում ընթերցողներին, համառոտակի նկարագրելով:

Տեղի է ունենում այդ, եթէ գարուն է՝ բացօդեայ, հրապարակում: Ըսող հասարակութիւնը մի քանի հարիւր հոգի մեծ, ձուռած 2րջան արած ծալապատիկ նստատում են գետնին, մի քանի շարք: (վերջին շարքում մեծ մասամբ կանգնած են լինում): Այդ շրջանակի մէջ, սաղը ձեռքին (թելով ուսից կախարած) խոշոր ու հաստատուն քայլերով ման է գալիս աշուղ-դերասանը իւր ունկընդիրներին երեսին նայելով՝ բարձր ձայնով պատմում է իւր հեքիաթը կամ պատմութիւնը: պատմում է ոչ միակերպ, այլ ինչպէս դեկլամատիւն, զործող անձերի փոփոխուելով փոփոխում է և ձայնը: Բացի զբանից, նա և խաղում է, երբեմն կանգնելով, երբեմն կռանում, երբեմն վազում, ոտքը գետնին խփում, ձեռքերով նշաններ անում, նայելով թէ ինչ է պահանջում պատմութեան բովանդակութիւնը: Պատմելիս երբ այն տեղերն է հասնում որ զործող անձերից մէկը երգելու է, իսկոյն սկսում է սաղը ածել և երգել այն երգը, զարձեալ դեկլամատիւնով՝ որ յիշեցնում է օպերայի սկզբնաւորութեան ժամանակները: Այնպէս աշխոյժ, այնպէս կենդանի է անցնում այս բանը՝ որ հանդիսականները ոչ մի բոպէ իրենց ուշքն ու միտքը չեն հեռացնում աշուղից: Ընդհակառակը իրենք էլ նստած տեղը անհանգիստ շարժումներ են անում, բարձրանում, ցածրանում, տխրում, ուրախանում, զանազան խրախուսական բացականչութիւններ արձակում, քաջալերում—բիւն, հալան, ուստա ջան, մաշալլա, արեւուզ մատաղ, սէան հախշի, շատ ապրիս, ձայնդ անսպառ, օգորմի աւուշ անցաւորացդ հոգունք և այլն: Պատմելու ժամանակ որոշ տեղերում զաղարներ (պաուզա) կան: հանգստանում է աշուղը, հանգստանում են և լսողները: սա էլ յիշեցնում է թատրոնական խաղամիջոցները: Այդ ժամանակ հեքիաթասացի ընկերը հրաւիրում է հասարակութեանը «բախշիշ» տալ, «փոստ» հաւաքել:

խակոյն շրջանի մէջ տեղ փութւմ են աշուղի մեծ, կարմիր թաշկի-
նակը, որ լցւում է պղնձէ դրամներով: Գիւղերում տալիս են նաև
ալիւր, ցորեն, իւղ և այլն: (Միթէ այս ամենից նախապատմա-
կան ժամանակների հոտ չէ գալիս):

Զմեռուայ երկար գիշերներին գիւղացու և շինականի ազատ
ժամանակը այդ հեքիաթասածութիւնը կատարւում է տներում.
մեծ յողաշներում, յայվաններում: Իսկ եթէ քաղաքումն է—
սրահարաններում: Մի ձէթի ճրագը փլուզւում է գիւղական յարկի
տակ ¹⁾ ու այդ մթութեան, այդ տօթի ու գոլորշու մէջ, գիւղացի
աշուղը կատարում է իւր գործը: Բացօդեայ լինելը այն առաւե-
լութիւնն ունի, որ նախ՝ շատ մարդ է լսում, երկրորդ՝ ցերեկով
լայսի տակ հեշտ է լինում նկատել աշուղ-դերասանի երեսի ար-
տայայտութիւնն ու հարուստ միմիկան: Անցեալներում Ս. էջմի-
ածնում մեզ պատահեցին Զանգեզուրցի երկու աշուղ-եղբայրներ
որ Ղազարապատի պատի տակ, հրապարակում, բազմաթիւ ուխ-
տոււրների բոլորածն շրջանում պատմում էին աշըղ Ղարիբի
հեքիաթը: Մի եղբայրը պատմում էր արձակ տեղերը, միւսը եր-
գում էր երգերը, իսկ երբ հարց ու պատասխանով երգերին էին
հասնում՝ երգում էին փոխ ընդ փոխ:

Ինչ են եղել մեր նշանաւոր աշուղներն այս գործում:

Սայեաթ-Նովն չենք կարծում թէ երբեքէ հեքիաթ կամ
պատմութիւն ասած լինի հասարակութեան համար. բայց մեզ
թւում է, թէ նա ունեցել է վրացերէն լեզուով մանր-մունր ծագ-
րաշարժ ոտանաւորներ ու կուպլետներ՝ որ ընկերական շրջանի
մէջ ասել-խօսելու ժամանակ ասել է, որպէս գեկլամասիօն ար-
տատանել: Անա Ախվերդեան հաստատում է մեր ենթադրութիւնը.
«(նա) ունի ասած վրաց գեղջուկ լեզուով անթիւ աշխոյժ խաղեր
ու անհամար ազգու բաներ...»:

Երբինը հեքիաթ ու պատմութիւն սիրել է, բայց չի ասել,
չի հետեւել. մի երկու անգամ միայն նեղ շրջանում պատմել է
մի թուրքերէն հեքիաթ ռօբիլիների խնդրանօք: Ջիւանին ոչ
մի անգամ հեքիաթ չէ ասել (թէն նրա պատանեկական վարպե-
տը՝ աշըղ Սիային յայտնի հեքիաթ ասող էր Զաւախբում). նա
այդ գործը գիւղական թափառական-աշուղներին թողնելով ինքը
վերցրել է դարձեալ տեսական կողմը. նա հեքիաթասաց չէ, այլ
հեքիաթարան է. նա հեքիաթներ է պատրաստում՝ որ ուրիշները
ասեն ու երգեն:

¹⁾ Մեր առօրի ժողովրդի մէջ մի առած կայ. եթէ մի բան ուզում են երկու
հոգով կատարել, ասում են՝

«միտաղուեմ ինձանից՝ հեքիաթը քեզանից»:

«Հազար ու մէկ գիշերներէ» նման հեքիաթներ էր պատմում կոյր աշուղ Թուջլարը. սա աշուղ-ղերասանների մէջ առաջին տեղը կարող է բռնել, եթէ միւս աշուղների շնորհքը երգերի յանկարծախօսութեան (էմբոլովիդասօն) մէջ է, այս աշուղի անպատրաստից ասելու ընդունակութիւնը հեքիաթի մէջ է: Ամբողջ Անատոլիայում յայտնի էր «Թուջլար էֆենդին» փաշաները, բէկերը մեծ սիրով լսում էին թէ ինչպէս է նա իւր տալիս ու կրթող հեքիաթների տուարը բաց անում, սկսում իր առասպելական պատմութեանքներն ու զրոյցները: Մեծամեծներ, մայրաներ, շատերը չը գիտէին թէ Թուջլարը հայ էր, որովհետեւ նա բացի թուրքերէնի մէջ ունեցած հմտութիւնից՝ որ մրցութեան ու բանակուտի մէջ էր մտնում ու յաղթում անուանի թուրքերին, և թրքասէր էր, մինչև իսկ թրքամուլ: Հագնւում էր ինչպէս թուրք ազնուական, ոտքերը «մասթաբուլ» (ինչ որ հագնում են Ախալ-ցըրխայի հայ կանայք) գլուխը շալ փաթաթած, ոսկեթիւ ելակը հագին ու վրան ձգած Վանի շալից դեղին ապա (վերարկու առանց թևերի): Նա հետը միշտ ման էր ածում իւր աշակերտներից մէկին որպէս թիկնապահ-ուղեցոյց, հրամանակատար: Մերունի աշուղները պատմում են մի շարք կուրիոզներ, անեկզատներ «Թուջլար էֆենդու» կեանքից, որոնցից տեկորդ շնեք համարում մի երկուսը առաջ բերել:

Մի օր Ղարսի փաշան (Ղարսը դեռ Թուրքիային էր պատկանում) պատուիրում է Թուջլարին, որ նա մի նոր, բոլորովին չը պատմած հեքիաթ առէ: Թուջլարը նեղ դրութեան մէջ է ընկնում. բարեկամ փաշայի ցանկութիւնը կամ հրամանը ստիպուած է լինում կատարելու: Նայում է չորս կողմը, նշան է անում աշակերտին, որ այլալուծած հետեկիս է եղել իւր վարպետի անհանգիստ շարժումներին՝ ու հազալով, կոկորդը մաքրելով անպատրաստից սկսում է մի նոր հեքիաթ յօրինել և՛ պատմել, և՛ ներկայացնել, անուանելով նրան «Աշրաֆ և Զոհրա»: Բաւական պատմելուց յետոյ Թուջլարն այնպիսի սրտաշարժ տեսարաններ է մէջ բերում՝ որ փաշան արտասոււմ է և սկսում է հեկեկալ: Անապատելի կերպով լաց է լինում և՛ Թուջլարը. աշակերտը դարձանում է վարպետի այդ վարմունքից ու մօտենալով հարցնում է. «Ուստա, զ՞ու ինչու ես լաց լինում, հօ գիտես որ պատմածդ հեքիաթը լիովին սուտ է, քո երեսկայութեանդ արդիւնքն է: «Որդի, պատասխանում է նա, ես լալիս եմ ոչ թէ հեքիաթի ազդեցութիւնից, այլ նրա համար թէ ինչպէս պիտի վերջացնեմ: Բայց և այնպէս՝ հեքիաթը վերջանում է

հետաքրքրական ֆինանսով և հիացած փառայից աշուղն ստանում է խոշոր պարգև:

Թուջլարի զուարմաստութեան ու սրախօսութեան համար բուսական է պատմել հետեւելը:

Մի անգամ երեք յայտնի թուրք աշուղներ լսած լինելով Թուջլարի համբաւը, գալիս են Ղարս նրան տեսնելու և փորձուելու: Դեռ քաղաք չը մտած, կամուրջի վրայ նրանք պատահում են Թուջլարին, բայց չեն ճանաչում թէ նա է: Նրանցից մէկը հարցնում է թէ՞ բարեկամ, թրտեղ կարելի է տեսնել Թուջլար էֆենդուն: Նա պատասխանում է գետօր մանամ, թան մանամ, բիլ մանամ: որ ունի երկղլմի նշանակութիւն—մէկ թան, ես եմ, ճանաչիր, ես եմ, գիտեցիր, ես եմ: մէկ էլ—«Ձեմ տեսել, չեմ ճանաչում, չը գիտեմ: Օտարականները վերջին մտքով հասկանալով հեռանում են: Բայց յետոյ միայն ուրիշներից լսելով նրա ով լինելը, հասկանում են իրենց խարուխը՝ և ամաչելով դառնում են իրենց տեղը, առանց այլ ևս Թուջլարի մօտ գնալու:

Թուջլարը գեղեցիկ, բարձրահասակ մարդ լինելով՝ լաւ էլ ձայնի առողջանութիւն է ունեցել ու ազատ շարժումներ ու ճկուն միտիկա: Մեծ դարմանքով են յիշում նրան ծերունիները՝ ով երբ և իցէ լսել է նրա մի որևէ պատմութիւնը:

Ոչ այնքան տեսիլու և խաղի մէջ, որքան հեքիաթների մեծ պաշարով յայտնի է Բանգի աշուղը: Նա պատմութեան ու հեքիաթի շտեմարան էր, անսպառ աղբիւր: Բանգին խիստ բարկամեւ էր՝ երբ հարցնում էին «Ուստա Բանգի, այս ինչ հեքիաթ գրաւես: «Օո ադ լաղտները մււս կը հարցնեն թէ գրեաւ, ես Բանգին եմ, ինձի Բանգի կրտսէն—պատասխանում էր նա: Այս աշուղը կոյր էր ու մի կոյր աղջիկ էլ առաւ կնութեան, որպէս զի հաւատարիմ մնայ իրեն ու չը խաբէ:

Աշուղ Շանդունին իւր հեքիաթներով ճիշտ որ հրդեհ էր ձգում լսողների սիրտը: Հասարակ, ուսմիկ մարդ էր, բայց լաւ սրտի և ընդունակութեան տէր:

Բուրսովին այլ կերպարանք ու բնութարան ունի երկտասարդ Ֆէյրադին (Ֆահրատը), ժամանակակից կոյր աշուղը: Նա քաղաքներում ու գիւղերում ման գալով ասում ու պատմում է ոչ հեքիաթ, այլ «Վէրք Հայաստանին», Բաֆֆու, Պոշեանի, Մերենցի վէպերը, իրենց երգեր աւելացնելով ու յարմարեցնելով պատմութեան ըզրանդակութեան:

Բուրսովին այլ կերպարանք ու բնութարան ունի երկտասարդ Ֆէյրադին (Ֆահրատը), ժամանակակից կոյր աշուղը: Նա քաղաքներում ու գիւղերում ման գալով ասում ու պատմում է ոչ հեքիաթ, այլ «Վէրք Հայաստանին», Բաֆֆու, Պոշեանի, Մերենցի վէպերը, իրենց երգեր աւելացնելով ու յարմարեցնելով պատմութեան ըզրանդակութեան: